

ԻՄ ՍԵՆԵԱԿՍ

Մէկ աշխարհ կայ ինձ համար,
Մէկ պատուհան դէպ' երկին.
Կապոյտ աչք է սիրահար,
Որ կը նայի անցորդին:

Հոն շուքի պէս մինակ չեմ,
Արեւն ինձի կը նայի,
Հայրենի երգ կը կանչեմ,
Սիրտըս անոյշ կը բացուի:

Շուքն ինկած է յատակին,
Գորգի նըման անշուշտի.
Ինձ կը նային սրտադին
Սուրբ նըկարներ տասնի չափ:

Քանի պանդուխտ հայեր կան
Որ ինձ նամակ կը գրեն,
Սրտերն իրենց կը բանան,
Երգեր կ'ուղեն հայերէն:

Սենեակըս շատ փոքրիկ է,
Ոտքը ոտքին չի բաւեր,
Բայց ինձ համար դըրախտ է,
Ինչպէս տըղուն երազներ:

Կ'առնեմ գլորիչ, կ'առնեմ բառ,
Սրտէս կ'առնեմ սիրոյ դեղ.
Խօսքի մը պէս կենարար,
Վէրք կը բուժեմ ամէն տեղ:

Երբ կը բանամ դռնակն հին,
(Երեք հարիւր տարուան կայ),
Կարծես նըւազն է կեանքին,
Որ նոյն սրտով կ'ընթանայ:

Իմ սենեակիս մէջ խօսուն,
Ծորակ մը կայ արծաթի.
Ուսկի՞ց կու գայ ջուրն հոսուն,
Զեռքերու պէս սիրելի:

Քրտաներկու թիւն ունի,
Մի՛ կարծէք բանտն է կեանքի,
Ժըպիտն է որ միշտ կու գայ,
Լացն առանձին կը խօսի:

Կը համբուրէ, կը գըգուէ
Դէմքս ու աչքերըս կարօտ.
Կարօտ կեանքին՝ որ կայծ մ'է,
Վայրկեաններու առաւօտ:

Յաճախ մէկ ձեռքս միւսին
Գիրք կ'ընծայէ կարդալու.
Թեւերուս մէջ կը հանգչին,
Մուսաներ հին օրերու:

Երեք կանթեղ դէմ դիմաց՝
Ինձ կը նային սրտադին.
Աչքերուս մէջ նորարաց
Արեւակներ կը թըլին:

Սենեակս աղքատ կը սիրեմ,
Խշտեակս՝ առանց ծոպերու.
Սիրտըս այնտեղ կը պահեմ,
Երբոր երթամ ման գալու:

5 Փետր. 1974

Հ. Վ. Յ.

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԱՐՀԵՍՏԵՐՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Գրեց

ԱՍՏՂԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

Երևան, «Հայաստան» հրատ. 1973, էջ
156 (48 գումար տախտակներ), քառա-
ծալ, լաթակազմ, տպագրակ 15.000:

Խնամքով կատարուած՝ մաքուր ու
չքեղ հրատարակութիւն մըն է այս գոր-
ծը, արժէքաւոր պարունակութեամբ:
Հատորին սկիզբը զետեղուած են հայե-
րէն, ռուսերէն եւ անգլիերէն ներածա-
կաններ, որոնք դործին նկարագիրը ցոյց
կու տան, հաւանօրէն Աստղիկ Գէորգեա-
նէ իսկ պատրաստուած:

Արդարեւ մեր մանրանկարչութիւնը
հարուստ է նիւթերով՝ որոնք կը ներկա-
յացնեն տոհմիկ արհեստներ, գործիք-
ներ եւ անոնց դործածութիւնը, տարազ-
ներ: Մեղուաջան Աստղիկ Գէորգեան
մեծ խնամքով հաւաքած է իր մանրա-
նկարչական նիւթերը, դանոնք քաղելով
Երևանի Մատենադարանին ձեռագիրնե-
րէն, որուն համար մեծապէս եւ ի սրտէ
երախտապարտ ենք բազմապատակ հե-
ղինակուհիին եւ Մատենադարանին ձեռ-
նահաս վարչութեան, որ այս շատ ըն-
տիր ու կարեւոր աշխատութիւնը հրա-
պարակ հանուած է:

Ներածականին մէջ կը տրուին կարե-
ւոր բացատրութիւններ՝ որոնք բնական
է գործը աւելի մատչելի կ'ընեն հասա-
րակութեան: Տախտակներուն վրայ տըր-
ուած նիւթերուն մասին եղած բացա-
տրութիւնները, առանց մասնագիտանա-
լու, գոհացուցիչ են: Անտարակոյս, հոս
տրուած մանրանկարչական նիւթերն են
որ կարեւորագոյն են եւ կենսական՝ ա-
պագայ ուսումնասիրողներուն համար:

Մանրանկարչական տախտակները, ո-
րոնք կը պարունակեն երկրագործական,
այգեգործութեան, խաշնարածութեան
եւ այլ բազում խմբաւորումներ, դուռնա-
ւոր եւ շատ հետաքրքրական են: Աստ-
ղիկ Գէորգեան հմտութեամբ ընտրած է
իր նմոյշները: Անտարակոյս՝ մեծաքա-
նակ նիւթ ունենալով ձեռքի տակ եւ ըս-
տիպուած ըլլալով սահմանափակուիլ,
ինչպէս որ ինքն իսկ կը խոստովանի,
շատ դժուար եղած ըլլալու են իր ըն-
տրութիւնները:

Թող ներուի մեզի դիտել տալ որ
«կապերտներ (տապաստակներ)» (էջ 10)
նոյն բանը չեն ներկայացներ: Կապերտ-
ները գիտենք որ կապերտներ են, որով-
հետեւ այդպէս ալ ներկայացուած են
մեր մատենագրութեան մէջ, Ե. դարէն
մինչեւ մեր օրերը: Սակայն «տապաս-
տակ» անգամ մը միայն գործածուած է
մեր մատենագրութեան մէջ, Ոսկերե-
րանի «Յաւատարանագիրն Մատթէոս»
հայերէն թարգմանութեան մէջ (հրատ.
Վենետիկ, 1828, երկու հատոր): Բազ-
մապատակ Հ. Վարդան Վրդ. Հացունի,
իր մեծարժէք «Ճաշեր եւ Խնճոյք Հին
Հայաստանի մէջ» (Վենետիկ, 1912),
կ'ըսէ որ հայ թարգմանիչը «տապաս-
տակ» բառը «իւր կողմանէ եւ բնագրէն
անկախօրէն կը յաւելու» հայերէն թարգ-
մանութեան մէջ (էջ 55): Այսինքն՝ Ոս-
կերեանի յուշարէն բնագրին մէջ չկար
«տապաստակ», սակայն հայ թարգմա-
նիչը Ոսկերեանի բնագրին այդ մասը
պարզելու համար՝ թարգմանութեան մէջ
մտցուցած է «տապաստակ» (Ոսկ. Մտթ.
Բ. 69): Յետոյ այս թարգմանութեան
միջոցին գործածական էր «կապերտ» եւ
«բազմական», որով ըստ երեւոյթի՝
«տապաստակ» տարբեր էր բազմականէն
կամ կապերտէն: Շատ հաւանարար՝

«տապաստակ» նոյն է փաւստոսի գործածած «է նորա ակըմբի դարմանէին բազմեալը»։ Այս «ակումբն» որուն չորս կողմը բազմած կը ճաշէին (դարձանէին), նոյն է Սուրբ Գրգի «զակումբն մաշկեային հետ»։ «Ակումբն մաշկեայ» ուրիշ բան չէ՝ եթէ ոչ կաշիէ կլոր այն սփռոցը՝ որ մեր նախնիք կը գործածէին իբր սեղան, զայն սփռելով բազմականին, գորգին, կապերտին վրայ, շուրջը դնելով բարձր, որոնց վրայ՝ կամ անոնց յեցած՝ կը նստէին խնոցային կամ ճաշին մասնակցողները։ Ամէն պարագայի տակ, շնորհալի հեղինակուհին որեւէ տուեալ չունի «տապաստակ»ը կապերտ կամ գորգ նկատելու։ Իսկ եղած տուեալները «տապաստակ»ը իբրեւ սեղանի սփռոց ցոյց կու տան, որ կը յիշուի սպանիացի Կլավիտոյէ (ԺԵ դար), Պապական նուիրակ Դանդինիէ եւ Բերեգուրուէ (ԺԶ դար)։

Կ'ուզէի քանի մը փոքր դիտողութիւններ ալ ընել հոս, որ երբեք չեն նուազեցներ այս շատ արժէքաւոր գործին կարեւորութիւնը։ Օրինակ՝ ԻԱ. տախտակին, որ Պղնձագործութիւնը կը ներկայացնէ, թիւ 1 եւ 4 մանրակարները անտարակոյս պղնձեայ չեն կրնար ըլլալ, քանի որ կախեալ իւղալամբեր են կամ կանթեղներ, որոնք միշտ ԱՊԱԿԵԱՅ կ'ըլլային, որովհետեւ կանթեղը լոյս տալու իր մըն էր. հոս տրուածները եռարկթակ կանթեղներ են, վերէն կախուած, լուսաւորութեան համար։ Տախտակ ԻԳ. «Բրուտագործութիւն», 1էն մինչեւ թիւ 10 մանրակարները հաւանաբար նոյնպէս ապակեղէններ են, ինչպէս նաեւ թիւ 12ը։ Իսկ թիւ 14ը որոշ կերպով պղինձէ շինուած կ'երեւի։ Թիւ 1-10 ապակեղէն են՝ իբնէն չափազանց նուրբ կանթերուն եւ զարդարանքին համար։ Գորգի (ինչպէս նաեւ նուագարանի) ընտիր նմոյշ մըն է Հաղարտի Աւետարանին (1211էն) կանոնախորաններուն մէկուն լուսանցազարդը, որ այս հաստըին մէջ նկատի չէ առնուած։

Հատորին վերջը կը տրուին եռալեզու ցանկեր՝ տախտակներու պարունակութեան, գործածուած ձեւագիրներու,

ներկայացուած իրերու եւ նիւթերու։

Պորունկ գոհունակութեամբ կը փակենք այս պատուական աշխատութիւնը, որ պատիւ կը բերէ Ժրջան հեղինակուհիին։ Մաղթենք որ շնորհալի Աստղիկ Գէորգեան աւելի ու աւելի պայծառութեամբ ասոր նման գործեր պատրաստել շարունակէ։ Մեր շնորհակալութենէն խոշոր բաժին մը կը հանենք Երեւանի Մաշտոցեան Մատենադարանին գիտնական վաստակաւոր յարգամեծար Տնօրէնին՝ Լեւոն Պաշիկեանի, ինչպէս նաեւ մեղուջան Ա. Ծ. Մնացականեանին՝ որ խմբագիրը եղած է այս գեղեցիկ եւ օգտակար գործին, եւ վերջապէս «Հայաստան» հրատարակչականին եւ անոր գեղադէտ Տնօրէնին՝ որ այսքան արժանաւայել գործ մը հրատարակած է իր տըպարանէն։

Թ. ՔԻՒՐՏԵԱՆ

* * *

ԳԼԱՋՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԷՋ

Գրեց
ԼԵՒՈՆ Գ. ԽԱՋԵՐԵԱՆ

Երեւան, «Լայպ» հրատ. 1973, էջ 232,
ուրբաժալ, լաթակազմ։

Պատուական ու գնահատելի աշխատութիւն մը եւս, Երեւանէն, զոր հաճոյքով կը կարդանք, մեր մշակոյթի պատմութեան ակերուն մէջ թափանցելով։

«Ներածութեան» մէջ, յիշելէ ետք, Գլաճորի Համալսարանին մասին գրող բանասէրները՝ Հեղինակը կ'աւելցնէ. «Մենք այս աշխատութեամբ, շարունակելով նշուած հայագէտների օգնած չընորհակալ գործը, փորձել ենք տալ մի ամբողջական ընդհանուր - համեմատական ուսումնասիրութիւն՝ նուիրուած հայ մտքի գիտական խոշոր կաճառին՝ Գլաճորի Համալսարանին» (էջ 4)։ Հետեւ հետէ ան կը պարզէ իր նպատակը։ Բազմ

մալաստակ ինչերեան վստահօրէն կարեւոր գործ կատարած կ'ըլլայ՝ եթէ իր ծրագիրն ամբողջացնէ յաջորդաբար։

Առաջին գլուխը կը ներկայացնէ «Գլաճորի Համալսարանի ստեղծման պատմութիւնը՝ ձեռագրական սկզբնաղբիւրների հետազոտմամբ»։ Կը հաստատէ Աղբերց վանքին նոյնութիւնը Գլաճորի վանքին հետ։ Կը ժխտէ արդէն չընդունուած կարծիքը՝ որ Թանահատի վանքը նոյն ըլլայ Գլաճորի վանքին հետ։ Ընդունելի է որ Ներսէս Մշեցի եւ իր աշակերտները Մշոյ Առաքելոց կամ Ս. Ղազարի վանքէն, որ կոչուած է նաեւ Գայլիճորու, Վայոց Ձորի Աղբերց վանք փոխադրուելով՝ այս վերջինիս տուած ըլլան Գայլիճոր կամ Գլաճոր կոչումը, ի յիշատակ իրենց հայրենի վանքին։ Գլաճոր «Համալսարան» կոչուեցաւ առաջին անգամ 1321ին։

Էջ 92, Հեղինակը այն տպաւորութիւնը կու տայ որ Յովհաննէս Երզնկացի, որով անշուշտ Պլազին կ'աղանակուի, Գլաճոր ուսած ըլլայ իր հոգեւորութիւնը։ Յովհաննէս Երզնկացի Պլազ Գլաճոր չէ աշակերտած։ Իսկ Յովհաննէս Երզնկացի Ծործորեցին հետեւ տըր չէր։ Վերջինս 1316էն վերջ ալլեւ Ծործոր կը գտնուէր, եւ հոն գրչութեամբ եւ մեկնողական գործերով կը զբաղէր։ Երբ ընդունինք որ Գլաճոր «Համալսարան» եղաւ 1321ին, քանի որ այդ ատեն առաջին անգամ կը յիշուի իբր «Համալսարան», կարելի չէ որ «Գլաճորի Համալսարանի ներկայացուցիչներին» մէջ դասաւորուի Յով. Ծործորեցին (էջ 93)։

Էջ 94, վաստակաւոր հեղինակը կը խօսի «Գլաճորի Համալսարանի մանրանկարչական արուեստի առանձնաշատ կութիւնների մասին»։ Թէ՛ յարգելի հեղինակը եւ թէ՛ իր աղբիւրը կը սխալին՝ նախ ընդունելով որ «սեղնակների տիրապետութեան ազդեցութիւնը զգալի է զարդանկարային ձեւաւորման մէջ»։ Սեղնակները արուեստ մը չեն ունեցած. իսկ ինչ որ կարելի է իտլամական արուեստ նկատել, կամ ընդունել իբր «մուսուլմանական արուեստի տարրեր, որոնք խառնուած են հարազատ (իմա՛ հայ

կական) ձեւերին», Սեղնակներէն շատ առաջ եւ անոնցմէ անկախ պէտք է փնտռել մեր արուեստին մէջ։ Գալով Թորոս Տարօնեցիի, մենք այլուր ըսելիք ունինք։ Ո՛չ ալ ընդունելի է Մոմիկի Կիլիկիա եղած ըլլալը, կամ թէ 1283ին՝ Կեռան թագուհիի համար Աւետարան ծաղկած ըլլալը, առանց տուեալներու։ Իսկ Մխիթար Ստոնեցի կամ Կրմանեցի արդարեւ ծաղկած է իր գրած ձեռագիրները, որմէ միակ եւ կարեւոր օրինակ մը ունիմ հաւաքման մէջ (Աւետարան թիւ 26, 1307էն), սակայն չէ մանրանշկարած։

Ինչպե՛րեան գնահատելի խղճատութեամբ կու տայ իբր երկրորդ գլուխ՝ «Համալսարանի ուսումնա - գիտական բաժինները», եւ երրորդ գլուխ՝ «Համալսարանական դասընթացներն ու ձեռնարկ - դասագրքերը»։ Ընտիր աշխատուած գլուխներ։ Զորբորդ գլուխը կը խօսի «Համալսարանի դասախօսական կազմին մասին»։ Բարունապետներու շարքին թիւ 6ը՝ Յովհաննէս բարունապետ Արծիշեցին կամ Ոսպնակեղ ըլլալէ աւելի՝ կրնայ Յովհ. Երզնկացի Ծործորեցին ըլլալ, որ արդարեւ «վարժապետ եւ ուսուցիչ» եղած է Մխիթար վարդ. Երզնկացիի ի Գլաճոր եւ ի Ծործոր։ Իսկ Կիրակոս Բարունապետը ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Կիրակոս Երզնկացին, որուն եղբորորդին էր Յովհ. Երզնկացի Ծործորեցին։

Հինգերորդ գլուխը իբր խորագիր ունի «Ուսանողութիւնը եւ Ուսումնա - ութեան Երջանը»։ Իսկ վեցերորդ գլուխը՝ «Ուսումնա - գիտական աստիճանաւորումը Համալսարանում»։ Վերջին, այսինքն եօթներորդ գլուխը կը ներկայացնէ «Համալսարանի պալատը Ունիթոական (Միաբարական) շարժման դէմ»։ «Միաբարական» թարգմանուած է Ունիթոա լատին վանական կարգը, որ աւելի լաւ ծանօթ է մեր մատենագրութեան՝ իբր «Միաբանողներու կարգ»։ Ինչպե՛րեան կու գայ կրկնել, «որ հայկական (Կիլիկիական) արքունիքի եւ կաթողիկոսութեան մերձեցումը պապական իշխանութեան հետ սոսկ քաղաքական եւ

նազմական դաշինքի եւ արակցութեան շարժառիթներով եմ քեյադրուած եղել» (էջ 205, ստորագծումները խաչերեանին են) :

Նախ չէ բացատրուած թէ Հայակի- լիկիս ի՞նչ «քաղաքական» հարց կամ կապ կրնար ունեցած ըլլալ Պապական իշխանութեան հետ: Եթէ ըսել կ'ու- ղուի որ լատին խաչակիրներու եւ Հա- յակիլիկիոյ մէջ ծագած կամ ծագելիք հարցերուն մէջ Պապական «քաղաքական» անկեղծութեան ակնկալութիւն ունէին մերոնք, դժբախտաբար ատիկա իրական- նութենէ հեռու է, եւ Հայակիլիկիոյ ե- կեղեցական եւ աշխարհական ղեկավար- ները արդէն քաջ զիտնալու էին թէ այդ ուղղութեամբ բոլոր հարցերուն մէջ Պապական իշխանութիւնները անյայտ ինքնուրուի իրենց լատին դաւանակիցներուն եւ ցեղակիցներուն կողմը պիտի բռնէին: Գալով «ռազմական» դաշինքի, Հայակի- լիկիոյ եւ Պապական իշխանութեան մի- ջեւ նման բան մը չէին կրնար ակնկալել Հայակիլիկիոյ վարիչները: Լեւոն Մեծ սկիզբէն իսկ խոստովեցաւ Ֆրետերիք Շիկամօրուսին խաչակրութենէն: Շի- կամօրուսի մահէն ետք, անոր որդւոյն եւ զորաբաժնին՝ դժուարութեամբ ճամ- բայ տուաւ դէպի Անտիոք: Յետոյ Պա- պերը զինուորական ոյժ մը չէին ներկա- յացներ, որուն վրայ կարենային վստա- հիլ Հայակիլիկիոյ վարիչները: Պապա- կան ազդեցութիւնը զինուորական շար- ժումներ ստեղծելու կարելութիւն չու- նէր. զինուորական շարժումներն էին որ Պապական իշխանութեան «օրհնութիւնը» կը փնտռէին՝ անգամ մը շարժելէ վերջ: Հայակիլիկիոյ մերձեցումը առ Պապա- կան իշխանութիւն՝ կու գար յատկապէս տնտեսական կարիքներէ: Տնտեսական կարիքները երկու տեսակ էին. նախ՝ ուղղակի դրամական ակնկալութիւն, եւ յետոյ, որ ըստ իս ամենակարեւորը, թոյլատրութիւն՝ որ հայ «հերձուածող» նկատուած առեւտրականները ազատ կեր- պով կաթողիկէ երկիրներու մէջ առեւ- տուր ընէին: Այդ բանին համար Պապա- կան վերին թոյլատրութիւնը ամենակա- բեւորն էր:

Գալով Պապական ցանկութեանց մա- սին խաչերեանի տեսութեան՝ թէ «պա- պական իշխանութեան համար, ընդհա- կառակը, առաջնայինն ու վճռականը դաւանարանականն էր՝ հայ Եկեղեցու բացարձակ հպատակեցումը Հոռմին՝ կա- թոլիկութեան ընդունումով, որպէսզի ամենահեշտ, բայց եւ խարդախ ճանա- պարհով՝ իր գերիշխանութիւնը հաստա- տի Կիլիկեան հայկական թաղաւորու- թեան սահմաններում եւ նրանցից էլ դուրս՝ շատ հեռունները» (էջ 206), ըսենք իսկոյն թէ այս մօտեցումը ճիշտ չէ: Նախ եւ առաջ Պապական կազմակերպու- թիւնը կրօնական — դաւանական կազմա- կերպութիւն մըն էր, որ իր դաւանանքը տարածելու համար՝ գլխաւորաբար քա- ռողչութեամբ կը զբաղէր: Այդ քարոզ- չութիւնը, մարդկային բնաւորութեամբ, երբեմն, կը դիմէ զանազան միջոցներու, որոնք ուրիշներու համար կրնան առա- կելի թուել: Բայց չեմ կարծեր որ Հա- յակիլիկիոյ կամ Հայութիւնը կաթոլի- կացնելը կարծուածին չափ մտասեւեռու- մը եղած ըլլայ Պապականութեան: Նման բանի մը յաջողութենէն Պապականու- թիւնը իր ցանկացած դերազօրութեան հասած պիտի չնկատէր ինքզինքը, ինչ- պէս որ չյաջողէին՝ Պապականութիւնը բանով մը չէ տուած: Բնական է «հա- ւատոյ տարածումը» սկզբնական նպա- տակ մըն էր, որուն գործադրութիւնը Հայոց վրայ, բնական է, ծրագրին մէջ պէտք էր ըլլար: Մենք բնական կը գտա- նենք որ պապական առաքել Ֆրայըր Օ- տորիքի, Ուիլիամ Ռիւպրիւքի նման ե- կեղեցականներու հետ՝ զրկուած ըլլան նաեւ Բարթոլոմէոս Պոլոնիացիի պէս զուտ դաւանական քարոզիչներ՝ Միտրա- նողաց, Դոմինիկեան եւ այլ կարգերէն: Եթէ այս շարժումը կարողացաւ Յովհան Գրեցի մը, Ջաքարիա Ծործորեցիի մը կամ Յովհաննէս Երզնկացիի — Ծործորեցիի մը իրեն չահիլ, նոյն ստեղծ պատճառ ալ եղաւ որ բարձրորակ հայ վանական կըր- թական կեդրոններ՝ ինչպէս Գլաձոր, Ա- ւաղ վանք, Տաթեւ դարձանան դիտական լրջութեամբ: Լատինացումը, ինչպէս գիտենք, չյաջողեցաւ: Խաթարման հետ-

քը՝ որ մեր նուիրական լեզուին մէջ ե- րեւցաւ, կարելի եղաւ շուտով մաքրել: Իցիւ թէ հայութեան դարձեալ յաջո- ղուեր մեր աննման հայերէնէն դուրս վտարել «Ֆինանսաւորել, տերիտորիալ, տենդենցներ, ուտոպիա, ֆիզիոնոմիա, սոցիալ» եւն... օտարախորթ բառերը, որոնք խաչերեանի նման ընտիր հայա- ղէտի մը զբէն պէտք էր որ Գլաձորի Համալսարանին նուիրուած դործի մը մէջ երեւնային:

Հազուադէպօրէն, նոյնիսկ սովորա- բար վատորակ թուղթով ու կաղմով հրատարակութիւններու մէջ, այսքան զէչ տպադրուած գիրք ստացած չեմ ե- րեւանէն: «Լոյս» հրատարակչականը, ըստ երեւոյթի, մրցումի մէջ է նման խորձելի հատոր մը հրատարակ հանե- լու: Ասոր հետ՝ ծուռ ու նեղ կտրուած լուսանցքներ՝ մեզի մեծ ցաւ կը պատ- ճառեն: Լ. Գ. Խաչերեանի այս աշխա- տութիւնը արժէքաւոր դործ մըն է, ու դժուար է ըմբռնել թէ ինչու այսպիսի հանգերձանքով ի յայտ կու գայ:

Յ. ԲԻԻՏԵԱՆ

ՍԻՆԵԻԲԻ ԺԵ-ԺԸ ԴԱՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻԻՐՆԵՐԸ

Գրեց

ՄՈՒՐԱՏ Մ. ՀԱՄԱՐԱԹԵԱՆ

Երեւան, 1973, ՀՍՍՀ ԳԱ հրտ., էջ 190:

Միջնադարեան Հայաստանի ճարտա- րապետութիւնը, ինչպէս յայտնի է, եր- կար տարիներէ ի վեր դրաւած է հետա- խոյգ անձնուրութիւնը. սակայն ցարդ չունինք ժէ-ժԸ դարերու Հայ ճարտարապետութեան վերաբերող մե- նագրութիւններ: Հասարակական ներկայ աշխատասիրութիւնը կը ձգտի լրացնե- լու նման մասնակի ուսումնասիրութիւն- ներու կարեւոր բացը:

Հեղինակը գիտականօրէն կը ջանայ լրիւ պատկեր մը տալ Սինեիքի ԺԵ-ԺԸ

դարերուն պատկանող շինարարական կառոյցներուն, ներկայացնելով զանա- զան ընտիր նմոյշներ՝ իրենց ճարտարա- պետական առանձնայատկութիւններով, եւ կը փորձէ վերլուծել այն ալլազան ազդակները՝ որոնք դրդապատճառ են ե- դած ստեղծելու տեղական ինքնուրոյն ճարտարապետական համակառոյցներ, ի- րենց տեղադրական եւ յատկազօդային լուծումներով: Կրօնական կառոյցներուն առնթիւ, կարեւոր նշանակութիւն ըս- տացած են միաժամանակ ամբողջային (քաղաքական-ազգայական) շինութիւննե- րը, իրրեւ բնական հետեւանք՝ Սինեիքի լեռնային դիրքին եւ դարաշրջանի քա- ղաքական փոթորկոտ անցուդարձերուն:

Հասարակական իր այս կարեւոր աշխա- տութիւնը բաժնած է չորս հիմնական գլուխներու: Ա) Ճարտարապետական ան- սամպլներ (էջ 17-58): Բ) Պաշտամուն- քային կառուցուածքներ (էջ 59-97): Գ) Աշխարհիկ կառուցուածքներ (էջ 98-143): Դ) Շինարարական տեխնիկական կոնս- տրուկցիաներ (էջ 144-159):

Մեր պատմութեան ԺԴ-ԺԵ դարերու քաղաքական իրադարձութիւններուն հե- տեւանքով յառաջացած ազդային կազմա- լուծումած վիճակը, անժխտելիօրէն տը- խուր հետքեր ձգած է Հայաստանի մը- շակութեան, կրթական, ինչպէս նաեւ տնտեսական կեանքին վրայ: Այս ընդ- հանուր կացութենէն, բնականաբար, չէր կրնար դերձ մնալ նոյն շրջանի շինարա- րութիւնը, հիմնովին ջլատուելով երկրին մէջ ծնունդ առած ճարտարապետական գործունէութեան ուժգին թափը:

Սակայն, շնորհիւ ԺԵ. դարու ընթաց- քին՝ հայ մեկեղութիւններու բազուկով ստեղծուած տանելի պայմաններուն, Ա- րեւելեան Հայաստանի եւ մասնաւորա- պէս Սինեիքի նահանգին մէջ, կ'ըսէ Հե- ղինակը, ստեղծուեցան նպաստաւոր պայմաններ՝ վերականգնելու համար կրօնական ու մշակութային կեանքը: Այս բարեպատեհ առիթով, վերաշինուե- ցան փլատակ վանքերն ու տաճարները, եւ կարճ ժամանակամիջոցի մը մէջ՝ ճարտարապետութիւնը ապրեցաւ իր գե- ղեցիկ զարթոնքը, ստեղծելով ռազմա-